

ԳԻՆԱՐԲՈՒՔ

Առաջին տեսարանին վարագոյրն ուրեմն փակուեցաւ՝ որպէս զի երկրորդինը բացուի: Յարդ եղածը կոկորդի պահանջ մ'էր լուկ, տարապայման ու զեղիս պահանջ մ'անշուշտ: Իսկ հիմայ պիտի սկսի խրախուժեան բաժինը. եւ բուն այս է Հայուն գիներքոյն իւր լծորդներով՝ զոր տեսանք (աստ, 120-1), Հելլենին συμπίσιονը եւ Հոովմայեցոյն commissatioն, երեքն ալ հոմանիշ եւ համազօր կատարելապէս երբեակ ազգերուն մէջ (Դար. Ա, 1373). եւ ոչ անշուշտ ադոնց մէջ միայն:

23. — Պատրաստութիւն: — Սեղաններն հիմայ դատարկուած են կերակրոց սպասներէն: Եւ անոնց կեղտերէն մաքրուելու համար՝ հաւանօրէն ձեռաց լուացում մ'ալ հոս կը կատարուի. ըստ որում ճաշէն վերջ լուացումն ալ յիշուած է Հելլենաց (Դար. Ա, 1275) եւ առաջին քրիստոնէից մէջ՝ ըստ Տերտուղիանոսի (Մարտ. 698):

Յառաջ կ'անցնին մատուակները տակառապետին առաջնորդութեամբ (աստ, 134, '5), «պատանեակը լուսատեսակը» (Արծ. 332), այս ինքն գեղեցիկ կամ ըսպիտակազգեստ, որոց պաշտօնն այս պա-